Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/6324/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 մարտի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին կայացված «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով թիվ 2 որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը մերժելու, «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և այդ մասով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

16.02.2023 թվականին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և պարտավորեցնել ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը:

Դատարանի (Դատավոր՝ Գ. Վարդանյան) 24.02.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը 06.03.2023 թվականին հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան, որը դատարանում մուտքագրվել է 15.03.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 17.03.2023 թվականին:

Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով որոշումը, որպես հետևանք մերժել «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը և պարտավորեցնել ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանը ճանաչել ընտրված մասնակից և այդ մասով պայմանագիր կնքել :

Դատարանն, ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան, հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-125-րդ, 199-200-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին կայացված «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով թիվ 2 որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը մերժելու, «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և այդ մասով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

Հայցադիմումը դատարանում ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 16.02.2023 թվականը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ.ՋԱԼԱԼՅԱՆ**